Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԱՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Արարատ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 - 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025 -30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում** սոցիալական աշխատողը անհատական և **խմբային** աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 44 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում. 2 շահառու ուղեկցվել է հիվանդանոց. 4 շահառու ուղեկցվել է ԱԱՀՆ. 7 շահառու ուղղորդվել է այլ կազմակերպություններ:
Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
**Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ, որոնց մասնակցել է 44 շահառու:
Կենտրոնում գործող խմբակներն են՝

- ✓ Երգ,
- ✓ Առողջարար ֆիզկուլտուրա,
- ✓ Գրական ակումբ,
- ✓ Կինոդարան,
- ✓ Հմուտ ձեռքեր:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում կազմակերպվել է 10 միջոցառում, որին մասնակցել է թվով 37 շահառու: Կազմակերպված միջոցառումներն են՝ Տարեցների միջազգային օր. էքսկուրսիա դեպի Լոռի, մեդիագրագիտության սեմինար՝ «Դիմակայելով ապատեղեկատվությանը» խորագրով, Ոսկե աշուն, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա նշում, Ամանոր, միջոցառում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից, շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (3 անգամ):

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման շրջանակներում հաշվետու** ժամանակահատվածում թվով 35 շահառու մասնակցել է հոգեբանի կողմից իրականացված 14

խմբային հանդիպումներին: Խմբային հանդիպումներն իրականացվել են հետևյալ թեմաներով՝ կոգնիտիվ մարզում, շարժողական վարժություններ, նեյրոբիկա: Իրականացվել են տրամաբանական խաղեր՝ մարզելով տարեցների հիշողությունը. կիրառվել են միջկիսագնդային փոխգործակցությունը խթանող տարբեր վարժություններ:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ մշակված նյութերը.
- Էքսկուրսիա դեպի Լոռի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/r/1aYTx7QpBF/?mibextid=wwXIfr),
- Մեդիագրագիտության սեմինար՝ «Դիմակայելով ապատեղեկատվությանը» խորագրով (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/17Wgmapzqc/?mibextid=wwXIfr),
- Ոսկե աշուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1AMn9qPV3F/?mibextid=wwXIfr):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- անհատական խորհրդատվություն և տեղեկատվական աջակցություն՝ ըստ անհրաժեշտության
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողները մասնակցել են Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից կազմակերպված «Խնամատար ընտանիք» թեմայով սեմինարին:
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում Արտաշատի համայնքային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾ Արարատի ՏԿ-ի կողմից կազմակերպված սոցիալական համագործակցության ֆորումին. որտեղ քննարկվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին աջակցելու մեխանիզմները և մարտահրավերները. համագործակցության ժամանակ ծագած համակարգային խնդիրները:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 44/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 33 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 36 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 5.1 | Երգ | 26 |
| 5.2 | Գրական ակումբ | 22 |
| 5.3 | Առողջարար ֆիզկուլտուրա | 17 |
| 5.4 | Կինոդարան | 21 |
| 5.5 | Հմուտ ձեռքեր | 9 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 37 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 19 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան___ 18.12.2025թ.

[illegible]